ՄԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍԵՒԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Սեւանի կղզին դարեր ի վեր եղել է հոգեւոր կենտրոն, սրբավայր, հիշատակներով հարուստ մի վայր, որը խորհրդային տարիներին, որպես հոգեւոր կենտրոն, ամայացվեց:

Հայ ժողովրդի հոգեւոր ու մշակութային կյանքում իր կարեւոր եւ ուրույն տեղն ու դերն է ունեցել, եւ այժմ էլ ունի Սեւանի վանական համալիրը: Վանքը նախկինում ունեցել է անապատ, մեծաթիվ միաբանություն, դպրատուն (բարձրագույն դպրոց), գրատուն, բազում գրիչներ, մանրանկարիչներ, քանդակագործներ, արհեստավորներ: Վանքից պահպանվել եւ մեզ են հասել Սուրբ Հարություն եկեղեցու պատերի ստորին շարքերի ավերակները, Սուրբ Կարապետ եւ Առաքելոց եկեղեցիները՝ ամբողջական պահպանված, Առաքելոց եկեղեցու կործանված գավթի պատերը: Սեւանի վանքի անապատը հիմնովին քանդել են համայնավարության տարիներին՝ թողնելով 1898 թ. կառուցված դպրոցի շենքը: Վանքի կառույցների, կառուցողների, կառուցման ժամանակաշրջանի, անվանումների մասին գրականության մեջ կա անճշտություն, որը կարիք ունի ճշգրտման[1]: Այս աշխատանքը փորձում է հստակություն մտցնել մասնագիտական գրականության մեջ եւ վեր հանել համալիրի, որպես հոգեւոր կենտրոնի, դերն ու նշանակությունը անցյալում եւ այժմ:

Ըստ կարեւորության անհրաժեշտ ենք համարում ներկայացնել տեղեկությունը տարածաշրջանի մասին. «Ծովակն Գեղամայ. ծագումն սորա եւ զայլ գիտելիսն զտանէ խնդրող ի պատմութեան Հայոց (Ա. 702). մեզ միայն հարկաւոր է գիտել թէ՝ Գեղամ որդի Ամասեայ՝ զԳեղարքունի շրջապատիւք եւ ծովակաւն յանձն արար Սիսակ որդւոյ իւրոյ. ի սոյն Սիսակայ սերեալք են երեք ազգք եւ գաւառապետք, որք են Սիւնիք, Աղուանք, եւ Շիրուանք. եւ վասն որոյ եւ գաւառս այս կոչեցաւ Սիւնիք եւ ծովակն Գեղամեան. որ զկնի վերակոչեցաւ Ծով Սեւանու»[2]:

Վաղնջական ժամանակներից ի վեր կղզին պաշտպանվել է ջրապատնեշով եւ պարսպապատով՝ «թէեւ հարուստ եւ ամրակուռ բերդորէիւք պաշտպանեալք՝ չեւ են անփորձ մնացեալք»[3]: Իհարկե, այժմ այդ պարսպապատերը պահպանված չեն, սակայն կա պահպանված հոգեւոր կենտրոնի մասին պատմությունը, ըստ որի՝ մինչ քրիստոնեության պետական կրոն ընդունելը կղզին եղել է հեթանոսական սրբավայր, այստեղ եղել են՝ «ի վերայ որոյ են բանք մեր, թէ ի գալ գեր- երջանիկ Լուսաւորիչ Հօր մերոյ, եւ հոգւով աշակերտեալ արքային Յոհաննու, ի Սիւնեաց գաւառ՝ ի կղզին Գեղամայ՝ ունէր (սա) մեհեան ազգին Սիւնեաց, պարսպեալ ամուր պատուարաւ եւ դղեկօք. զտունն մեհենից աղօթիւք սրբագործեալ՝ ըստ այնմ ի մէջ կղզոյն ի բարձրադիտակ գագաթան լերինն էր կառուցեալ մեհեանն այն, որ ունէր զնմանութիւն սրբոյն լերին Գողգոթայ. վասնորոյ եւ զսրբագործեալ Տաճարն անո-

1 Տե՛ս Documents of Armenian architeqture "Sevan", Միլան, 1987, հեղինակ Ստեփան Մնացականյան:

2 «Դատմություն Անցից Անցելոց Սեւանայ Վանուց. արարեալ Մանուէլ վարդապետի Կիմիշխանցւոյ ի 1830», ի Սեւան, էջ 8:

3 Անդ, էջ 6:

ուանեցին Սուրբ Յարութիւն: Եւ ըստ այնըմ գերերջանիկ հաւատոյ Հայրն մեր, միշտ յատուկ պաշտպան իւր ունէր զսուրբն Յովհաննէս Կարապետ. նմին իրի ի բազում տեղիս յանուն նորին կառուցանէր զերեւելի եկեղեցիս, որպէս ի Բագրեւանդ գաւառի զԵրեք-Խորան կոչեցեալն, յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի սրբացուցեալ, եւ անդ մկրտեալ զարքային Տրդատ՝Յոհաննէս վերակոչեաց»[4]:

«Ինչպես քրիստոնեությունն ընդունող ուրիշ ազգաց մեջ, նույնը պետք էր տեղի ունեցած լիներ հայոց մեջ, այն է՝ նախկին հեթանոսական տաճարները սրբագործել նոր պաշտման համար»,-նշում է Թ. Թորամանյանը[5]:

Սյունաց իշխանը բագինների տեղերը հատկացրեց եկեղեցիների եւ աղոթարանների շինությանը:

Գեղատեսիլ կղզու գագաթին այժմ էլ կան պահպանված Սուրբ Հարություն եկեղեցու պատերի ստորին շարքերի ավերակները. փաստորեն Սուրբ Հարություն եկեղեցին նախկինում եղել է հեթանոսական մեհյան, եւ Գրիգոր Լուսավորիչը այն սրբագործել եւ անվանել է Սուրբ Հարություն, եւ այն ծառայել է որպես քրիստոնեական տաճար: Հարակից տարածքում կառուցվել է նաեւ եռախորան եկեղեցի՝ նման Բագրեւանդում Լուսավորչի կառուցած եռախորան տաճարին, ինչպես պատմիչն է ասում՝ «Եւ ըստ այնըմ գերերջանիկ հաւատոյ Հայրն մեր (Սուրբ Գրիգոր Լուսավորիչը), միշտ յատուկ պաշտպան իւր ունէր զՍուրբն Յովհաննէս Կարապետ. նմինիրի ի բազում տեղիս յանուն նորին կառուցանէր զերեւելի եկեղեցիս», որպիսին էր Բագրեւանդի Սուրբ Կարապետ եռախորան եկեղեցին, ուր եւ մկրտեց Տրդատ թագավորին եւ նրան վերակոչեց Հովհաննես[6]:

Սեւանի Սուրբ Առաքելոց վանքը: Կենտրոնում Սուրբ Առաքելոց եկեղեցին է, հեռվում՝ Սուրբ Կարապետ եկեղեցին:

4 Անդ,էջ 8-9:

5 **Թորոս Թորամանյան**, Հայկական ճարտարապետություն, էջ 108:

6 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան** , Սյունիքի պատմությունը, Երեւան, 1986, էջ 75:

Այսպիսով պարզ է դառնում, որ Սուրբ Կարապետ եռախորան եկեղեցին կառուցվել է չորրորդ դարում, շատ ավելի վաղ քան նրա կառուցումը նշվում է 874 թվականին եւ վերագրվում է Աշոտ Բագրատունու դուստր Մարիամ իշխանուհուն: Պարզ է դառնում, որ Սուրբ Կարապետ եկեղեցու կառուցումը պետք է վերագրել Սուրբ Գրիգոր Լուսավորիչին. «Ուստի եւ ապա մերձ Սուրբ Յարութեան սրբացեալ Տաճարին կառոյց եւ մատուռ մի անուանելով Սուրբ Կարապետ, ի պատիւ Ամլորդւոյն եւ արքային Տրդատայ»[7]:

Այս տողերը հաստատում են վերը նշվածը. «Ապա զբոլոր կղզին, խորհրդակցութեամբ արքային վերակոչեցին **սա է Վան**, իբր թէ, որ երբեմն բազնաց էր տեղի, յետ այսորիկ՝ եղիցի Ամոյենիցն Բազնեաց, մենամարտիկ զինուորացն Քրիստոսի Հարց. անապատականաց բնակութիւն եւ վանք: Սակայն յետագայք կրճատելով զոմանս տառս՝ ասացին Սաման, կամ Սէվան. յորմէ ցարդ հաստատեալ, ո՛չ միայն կղզին, այլ եւ բոլոր ծով Սէվանու, կղզի եւ անապատ Սէվանու: Բայց իրականապէս՝ սուրբ անապատս կառուցեալ է յանուն Սուրբ Աստուածածնի եւ երկոտասան Առաքելոցն Քրիստոսի, որպէս կարգ պատմութեանս ցուցանէ»[8]:



Հայ Առաքելական Եկեղեցին ունի հոգեւոր կառույցների տարբեր տիպեր: Այդ տիպերից են վանական համալիրների հարեւանությամբ կառուցված մենաստան-անապատները՝

7 «Պատմութիւն Անցից Անցելոց Սեւանայ Վանուց» , էջ 13:
8 Անդ, էջ 8-9:

«..ընդ նմին եւ զէր անմարմնոց կային՝ մենակեաց աղօթկերաց ապաստան սուրբ անապատին Սեւանու»[9]:

Այսպիսով Սուրբ Կարապետ եկեղեցին եւ Սեւանի անապատը գոյություն են ունեցել կղզու վրա Սուրբ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից. «Ի հոլովել ջորս հարիւր ամեայ ժամանակաց, շնորհաբաշխ Աջով Սրբոյ Հօրն մերոյ սրբագործելոյ Սուրբ Յարութեան եւ Սուրբ Կարապետ Տաճարացն ի Սեվան կղզին, որ անվրդով խաղաղութեամբ զհոգեւոր բարեկարգութիւնսն փայլեցուցանէին երանելի Հարքն անապատիս Սեւանու...»[10]:

«Իսկ Սեվան կղզի, որ ի ծովակին Գեղամայ՝ թէպէտեւ ի սկզբան նուազի անդ ո՛չ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկամ մի ամաց (702. ՃԾԱ), մատնեցաւ (զՄրուան ոմն յիսմայէլեան տոհմէ Ոսպիկան) ի ձեռս նորա. եւ որք մի անգամ բնակեալք կային յամրոցի անդ՝ գերի առնեալ տանէր, եւ զկապուտ կողոպուտսն յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն»[11]: Այսինքն՝ մինչեւ 702 թվականը Սեւանա կղզին անձեռնմխելի էր բարբարոսների համար, սակայն 702 թվականից սկսյալ այն քանդվում եւ ավերվում է՝ «...եւ կղզու վրա կանգնած էին Սուրբ Հարություն եւ Կարապետ եկեղեցիները»:

Ապա՝ «...ի Սեվան կղզի փայլէր յոյժ սրբութեամբ եւ իմաստութեամբ Մաշտոց վարդապետ Եղիվարդեցի: Վասն սոյն երանելոյս գրէ Օրպէլեանն յ38 գլուխ պատմութեան. «Քանզի Մաշտոց եկեալ, ասէ՝ յանուրջս զալ առ նա ինքն երկոտասան առաքելոց ի վերայ ծովուն, եւ նշանակեալ զտեղի եկեղեցւոյն, հրամայեալ նմա կանգնել անդ զեկեղեցի յանուն Սուրբ Աստվուածածնի, եւ երկոտասան առաքելոց, եւ սահմանել միաբանակեացս»[12]:

Սոյնանման վերին ազդեցութեամբն շարժեալ եւ թագուհին Մարիամ, որ բնակէր մերձ առ առնս Ատրուծոյ ի Կուսանաց վանս ի Յամաքարերդ եւ եկեալ առ Մաշտոց՝ յայտնեաց զբարեհաճութենէ կամաց իւրոց, վասն շինութեանցն եկեղեցեաց եւ մենաստանացն. թէեւ կային յայնժամ Սուրբ Յարութեան եւ Սուրբ Կարապետի Տաճարքն»[13]:

Բայց վասն հրաշալի ազդեցութեանց ձեռնատուութեամբ միմեանց, այրն Աստուծոյ եւ թագուհին գեղեցկատիպ յօրինեալ զՍուրբ Առաքելոցն ի գագաթան լերին գմբէթաւոր եւ հոյակապ (ՅԽԶ) մերձ նշանակեալ Սուրբ Տաճարացն (897, ՅԻԶ)՝ յարկացուցեալ զայն տեղի բարձրաբերձ ի գագաթան լերինն, լինել Առաջնորդարան եւ ուսումնասէր անձանց վարժարան: Իսկ ի ստորոտ լերինն կառուցին յանուն Աստուածածնի հոյակապ ժողովարան եւ աղօթատեղ սրբոց ճգնազգեաց մենացեալ հարց»[14]: Նշվում է նաեւ՝ «Եւ երանելի թագուհին Մարիամ զարդարեալ զսուրբ եկեղեցիսն վայելուչ եւ արժանաւոր զգեստիւք, սրբութեանց անօթիւք, եւ սենեկացն հարկաւորօք՝ կայր եւ ինքն ասպուածահաճոյ վարուք ի վանս Կուսանաց»[15]:

Այսպիսով, Մարիամ իշխանուհին կառուցում է Սուրբ Առաքելոց Տաճարը 874-ին Սեւանա կղզում, լեռան գագաթին՝ եռախորան եւ գմբեթավոր եկեղեցի, Մաշտոց վարդա-

9 Անդ:
10 Անդ, էջ 13:
11 Անդ, էջ 13-14:
12 Անդ, էջ 19:
13 Անդ:
14 Անդ, էջ 20:
15 Անդ, էջ 21:

պերի անուրջի եւ իր կամքի համաձայն. «Անդ մեռաւ սրբակրօն մայր նոցա Մարիամ, որ էր քոյր արքային Սմբատայ. այլ յետ քանի մի ամաց մարմին նորա բերեալ թաղեցաւ ասպ ի Սեվան կղզի ի գագաթան լերին՝ մերձ Սուրբ Առաքելոց հոյակապ յինքեանէ շինեալ Տաճարին, թէեւ ի Չամչեան պատմութեան գրի իբր տարեալ թաղեցաւ ի Գեղարքունիս՝ յեկեղեցին ոչ (որ) կոչիւր Շողագայ»[16]:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Մարիամը թաղվեց քառախորան գմբեթավոր տաճարի՝ Շողագա եկեղեցու մոտ, որը նույնպես կառուցել էր ինքը: Չնայած Սեւանի Սուրբ Առաքելոց եկեղեցու հյուսիս-արեւմտյան ավանդատունը, որը հետագայի հավելում է, կոչվում է Մարիամի մատուռ: Արդյոք իշխանուհու մարմինը թաղված է Սուրբ Մարիամ մատուռում, թե Շողագա եկեղեցու մոտ՝ մեր քննարկման խնդիրը չէ:

Մարիամի ցանկությամբ այստեղ կառուցվեց Առաջնորդարան եւ վարժարան՝ «Իսկ ի սպորոտ լերինն կառուցին յանուն Աստուածածնի հոյակապ ժողովարան եւ աղօթատեղ»:

Իսկ այս վկայությունը վերաբերում են Սուրբ Առաքելոց եկեղեցու գավթին, որից կանգուն են միայն պատերը. «Ի չորրորդ ամի Կաթողիկոսութեան Տեառն Սարգսի, ի Դեկտ. ամսոյն եղեւ գետնաշարժութիւն սարսափելի եւ տեւեաց ամիս եօթն (995), եւ եղեն քանդմունք մեծամեծք, զորմէ գրէ Ասողնիկ:



Սեւանա կղզու բարձրադիր հատվածում տեղադրված եկեղեցիների և ավերակ կառույցների պատերի մնացորդների հատակագիծը

Ցայտ է թէ, յայսմ շարժմանէ քայքայեալ եւ աւերեալ է Սուրբ Յարութեան Տաճարն Սեվանու, որոյ այժմ միայն գագաչափ որմունքն տեսանին, որք ունին զնշան հնագոյն շինո-

16 Անդ, էջ 22:

ուածոց: Նոյնպէս եւ Սուրբ Կարապետի մատուռն խարխալեալ, որ յետոյ բարեպաշտ ժողովուրդ Գեղարքունւոյ զմբէթաւոր յօրինուածով վերականգնեալ են, ըստորում նախնական յիշատակ Իշխանաց եւ Տեարց իրեաց»[17]:

Նշվածից պարզ է դառնում, որ 995 թվականի դեկտեմբերի յոթին եղել է կործանարար երկրաշարժ, որի պատճառով հիմնահատակ քանդվել են Սուրբ Հարություն եւ Սուրբ Կարապետ եկեղեցիները: Սակայն վերջինս՝ «զմբէթաւոր յօրինուածքով վերականգնեալ են ըստորում նախնական յիշատակ Իշխանաց եւ Տեարց իրեաց էր»:

Իսկ Սուրբ Հարություն եկեղեցին ավերակ էր. «Ի 1815 ամէ հետէ հայազգի ոմն Մելքոն անուն՝ եկեալ ապտ ի Տփխիսայ վարէր զճգնաւորական կեանս: Սա երաց զհիմն Սուրբ Յարութեան տաճարին որ ի գլուխ լերին կղզւոյս, եւ որ թաղեալ էր ընդ հողով խորագոյն, եւ ի հիմանէն վերականգնել կամէր զնոյն եկեղեցի, զոր եւ կարէր իսկ հայթայթելով, սակայն վախճանն նորա խափան եդ գործոյն: Եւ որպէս զշրջապատս սոյն Յարութեան Տաճարին, նոյնպէս եւ Սուրբ Առաքելոց եւ Սուրբ Կարապետ Տաճարացն հարեաց եւ ընդարձակեաց»[18]:

Կարելի է ասել, որ մինչ 995-1815 թթ. Սուրբ Հարություն եկեղեցին ավերակ էր, եւ միայն Մելքոն անունով ոմն ճգնավոր փորձել է այն վերականգնել հին հիմքերի վրա, մաքրել է փլատակները, ընդարձակել շրջակայքը: Ենթադրվում է, որ նախկին Սուրբ Հարություն եկեղեցին բավական մեծ է եղել, եւ Մելքոն Ճգնավորը, զումար հայթայթելով, փորձել է վերականգնել եկեղեցին, ուստի Սուրբ Հարություն եկեղեցու ունեցած այժմյան հատակագծային լուծումը, որ ավելի փոքր է քան հեթանոսական տաճարի հատակագիծը, պարտականում է Մելքոն Ճգնավորին, որը միայն քարի մեկ շարքով է ընդամենը կարողացել բարձրացնել կառույցը, եւ նրա մահվան պատճառով շինարարությունը անավարտ է մնացել:

«Արդ՝ ըստ յայտնութեան հաւատարիմ պատմագրաց, Հայաստան աշխարհ, որպէս յեղուզակաց նոյնպէս եւ ի գետնաշարժից՝ մերձ ընդ մերձ կրեալ է զգերութիւն, զաւերութիւն եւ զամայութիւն. որով եւ սոյն Սէվան կղզւոյ շինուածքն քանիցս անգամ աւերալ եւ անշքացեալ են. թէպէտեւ՝ վերստին ի ձեռս բարեսէր Հարց եւ բարեպաշտ ժողովրդոց հետզհետէ ընկալեալ է զվերանորոգութիւն իւր»[19]:

Գրականության մեջ Սուրբ Առաքելոց եկեղեցին ներկայացվում է որպես Սուրբ Աստվածածին եկեղեցի: Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է. «Զի եւ յաւուրս Մխիթարայ Առաջնորդի եւ Բարսեղ Վարդապետի վերընտրին նորոգութիւն եղեալ է սոյն Սէվանու նշանակեալ վանօրէից եւ սեւեկացն, ըստ ցուցանելոյ ի յորմունս եղեալ արձանագրութեանցն (1654. ՌՃԳ): Քանզի Տփխիս քաղաքացի, ի տոհմէն Չիթաղեանց, բարեսէր երեք եղբարք, որդիք Թադայի՝ Սուլուխան, Զալ եւ Զօհրապ, եկեալ ի սուրբ ուխտս, յաւուրս Փիլիպոս Կաթողիկոսի, տեսեալ սոցա... ջերմեռանդ յօժարութեամբ յարդար վաստակոց իւրեանց ձեռնարկեալ շինեցին վերանորոգմամբ, որպէս զՏաճարսն, նոյնպէս եւ զհարկաւոր յիշատակիսն»[20]:

17 Անդ, էջ 31-32:
18 Անդ, էջ 44:
19 Անդ, էջ 39:
20 Անդ, էջ 39-40:



Վերանորոգեցին նաեւ Սուրբ Առաքելոց եկեղեցու հին դռները, որոնք այժմ պահվում են ՀՀ պատմության թանգարանում. «Բայց գտանին ի վերայ Առաքելոց Տաճարի երկու ընկուզեայ դրունք արեւմտեան եւ հարաւային կողմանց, որք յոյժ զարմանալի ճարտարապետական նկարուք եւ հիանալի փորուածովք իբր քերուբ զեւտ ասղանի յօրինեալք ի հնագոյն ժամանակաց»[21]:

Չիթաղեանց, բարեսեր երեք եղբայրները ոչ միայն նորոգել են Սուրբ Կարապետ եւ Առաքելոց եկեղեցիները այլեւ՝ «Արձանագրութիւնք Տաճարացն Ս. Անապատին Սէվանու ի վերայ սեան հարաւային կողման, յեկեղիս ցառջեւն Սուրբ Աստվածածնի, գրի:

Յամի Ռ. երորդի ՃԳԺաներորդի. Շնորհօքն Աստուծոյ մեք հարազատ եղբարքս Խոճայ Սուլխանս եւ Զաքս ի քաղաքէն Տփխեաց Ասքէն Չիթաղեանց որդիք Թադայի եկեալ ի Սուրբ Անապատս ի Սէվան Ծովապատ, զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացաք մեր ապրանաց շահն Ժանորդ տանք Սէվանայ անապատիս զոր շինեցաք Սուրբ Աստուածածինս Եկեղեցիս»[22]:

Արձանագրությունը գրված է Սուրբ Աստվածածնի հարավային սյան վրա, որը ժամանակին արձանագրել է Շախաթունյանցը :

Ըստ լուսանկարի (տե՛ս արխիվային լուսանկարը) եկեղեցին եռանավ բազիլիկ եկեղեցի է՝ կառուցված սրբատաշ քարերով, քարե ծածկասալերով, փոքր գեղեցիկ ռոտոնդայով: Տասնյոթերորդ դարին բնորոշ եռանավ բազիլիկ եկեղեցիների նման, սա նույնպես հավանական է ունեցել է (ըստ լուսանկարի) քանչորս մետր երկարություն եւ մոտ տասներկու մետր լայնություն: Արեւելյան պատի վրա երեւում են պատուհանները, որոնցից կողային-

21 Անդ, էջ 41:
22 Անդ, էջ 107:

ները պատկանում են ավանդատներին եւ ունեն ուղղանկյուն շրջանակներ: Սակայն անցած դարասկզբին կատարված լուսանկարի ներքեւի մեկնությունը սխալ է, քանի որ 897 թ. Մարիամ իշխանուհին ձեռնակել էր ժողովարանի գավթի եւ՝ «...մերձ նշանակեալ Սուրբ Տաճարացն (897, ՅԻԶ)՝ յատկացուցեալ զայն տեղի բարձրաբերձ ի գագաթան լերին, լինել Առաջնորդարան եւ ուսումնասէր անձանց վարժարան: Իսկ ի ստորոտ լերինն կառուցին յանուն Աստուածածնի հոյակապ ժողովարան եւ աղօթատեղ սրբոց ճգնազգեաց մենացեալ հարց»[23] եւ ոչ թե Սուրբ Աստվածածին եկեղեցի:

Երանավ բազիլիկ եկեղեցու քարե ծածկասալերը ասում են՝ եկեղեցին ունեցել է քարե թաղեր, հակառակ դեպքում նրա տանիքածածկը չէր կարող լինել քարե ծածկասալերով: Աստվածածին եկեղեցու արեւմտյան կողմում եղել է գավիթ փայտե սյուներով եւ փայտե ծածկով, որի վրա տեղադրված է եղել փայտե զանգաշտարակ: Գավիթը ունեցել է հարթ հողե ծածկ, ինչպես երեւում է լուսանկարից. «Շնրհօքն Աստուծոյ նորոգեցաւ տանիք Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ... Յամի Տեառն 1832»

«Ի վերայ փայտեայ սեանն զաւթին նոյն Եկեղեցւոյ, որ գրեալ է վերայ թղթոյ եւ կպուցեալ է ի նա: «Յամի Տեառն 1836: Նորոգեցան ի հիմանէ զաւիթս Սուրբ Աստվուածածնի, եւ մէկ մեծ մառան...»[24]:

Աստվածածին եկեղեցու արեւելյան կողմում երեւում է մի մատուռ-վկայարան, որի մասին տեղեկություններ չկան: Մատուռի արեւելյան կողմում, պատին կպած երեւում է ավելի փոքր կառույց, հավանաբար այստեղ թաղված են եղել Սուրբ մասունքներ:

Աստվածածին եկեղեցու շուրջ բոլորը միաբանական կառույցներ են՝ հարթ հողե տանիքներով, երդիկներով եւ բուխարիների օդանցքներով:

Պարզ երեւում է, որ միաբանական կառույցները դեպի բակ ունեցել են բաց փայտե պատշգամբներ: 1898 թ. Ավետիս Ղուկասյանի բարերարությամբ կառուցվել է դպրոցական մեկ հարկանի քարե շենք, որը ներկայումս Սեւանա անապատից պահպանված միակ կառույցն է:

Սեւանի վանքը եւ անապատը գործել են մինչեւ անցած դարի երրորդ տասնամյակը:

Խորհրդային առաջին տարիներին համայնավարական իշխանությունները քանդել են թե՛ Աստվածածին եկեղեցին, թե՛ գավիթը, թե՛ մատուռը եւ թե՛ միաբանական կառույցները: Միաբանական կառույցներից հյուսիսայինը՝ 1898 թվականին կառուցված դպրոցի շենքը, խորհրդային տարիներին գործում էր որպես հանգստյան տուն եւ տրված էր կղզիաբնակներին որպես բնակելի կացարան: Իսկ քանդած Աստվածածնի եւ գավթի տեղում կառուցվել է մշակույթի պալատը, որը մինչ այժմ կանգուն է:

Դանիել վարդապետը 1451 թվականին հիմնել է Սեւանի վանքի վարդապետարանը, որը հաջորդել է Տաթեւի համալսարանին եւ կոչվել է Արեւելյան տան վարդապետարան: Սեւանի վանքում Դանիել վարդապետի սաներն են եղել՝

Ներսեսը-հեղինակայում Սեւանի վանքի առաջնորդ

Հորդանան վարդապետը-Տաթեւի վանքի առաջնորդ

Գալուստ վարդապետը-Հովհաննավանքի առաջնորդ եւ շատ ուրիշներ: Այստեղ սովո-

23 Անդ, էջ 20:
24 Անդ, էջ 109:

բել են Աբրահամ Սեւանցի, Գրիգորիս արքեպիսկոպոս, Սահակ վարդապետ ծաղկողները:

Իսկ Ի դարի կեսերին Սեւանա թերակղզում, որը 17 դար շարունակ եղել էր հոգեւոր մշակութային կենտրոն եւ տվել է ժամանակի մեծ Կաթողիկոսներ, լեզվաբաններ, պատմաբաններ, մնացել էր պահպանված միայն երկու՝ Սեւանի վանական համալիրի Սուրբ Կարապետ եւ Սուրբ Առաքելոց եկեղեցիները, որոնք չէին գործում եւ միայն պատմամշակութային հուշարձաններ էին: Սեւանի դպրանոցը վերաբացվեց 1990 թվականին:

Թերակղզում վանական եւ նոր հոգեւոր կյանքը վերակենդանացնելու համար, անհրաժեշտ էր քանդված կառույցների փոխարեն կառուցել նորերը, որոնց կառուցումը ձեռնարկեց 1996 թվականին Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը՝ սկսելով Սեւանի Վազգենյան դպրանոցի կառուցումից: Հաջորդ քայլը պահպանված եկեղեցիների վերականգնման աշխատանքներն էին: Պատվիրվեցին նախագծեր Սեւանի Վազգենյան դպրանոցի համար (հեղինակ՝ Օլեգ Շոկոեւ) եւ Սուրբ Կարապետ եւ Սուրբ Առաքելոց եկեղեցիների վերականգնման համար (հեղինակ՝ Միշա Հակոբյան): Վերականգնվեցին վանքի եկեղեցիների տանիքածածկերը: Վերականգնման ընթացքում ծածկերի տակից բացվեցին մի քանի տասնյակ խաչքարեր եւ դրանց բեկորներ, որոնք այժմ ցուցադրվում են տեղում: Իսկ դպրանոցը կառուցվեց Սեւանի թերակղզու հյուսիսային կողմում, բլրի տակ, ուր նախկինում եւս եղել են դպրանոց եւ վանականների կացարաններ: Պահպանվել էր մեկ հարկանի դպրոցի շենքը՝ կառուցված 1898 թ., որը համայնավարական կարգերի ժամանակ օգտագործվում էր որպես հանգստյան տուն: Այս կառույցից հյուսիս-արեւելք, վանական կառույցներին հատուկ մեկ բակի շուրջ ձեւավորվեց երկհարկանի, կիսանկուղային հարկաբաժնով դպրատուն: Սա

առաջին համարձակ քայլը եղավ հարյուրամյա դադարից հետո կերպելու նման կրթօջախ, ուր այժմ հոգեւոր կրթություն են ստանում բազմաթիվ երիտասարդ հոգեւորականներ: Իր գահակալության առաջին իսկ օրերից Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի մտահոգության առարկան է եղել սկսած գործը ավարտելը: Նրա անդուլ ջանքերի շնորհիվ ավարտվեց միաբանական շենքի կառուցումը: Շենքը հյուսիս-արեւելք անկյունով տեղադրված մի կառույց է, որի արեւմտյան թեւը մեծ կամարակապ բացվածքով միանում է հին մասնաշենքին:

Դեպի լիճը նայող արտաքին ճակատը լուծված է կամարակապ բաց պատշգամբներով: Կառույցը իրականացված է մոխրագույն բազալտ քարով: Քարի գույնի պասիվության բերումով համալիրը միաձուլված է տեղանքին, եւ միայն մոտ տարածությունից այն դառնում է ավելի ցայտուն եւ ընկալելի: Շենքի երկու հարկերում տեղավորված են հարմարվեստ կացարաններ ուսանողների համար՝ լոգարանով, փոքր նախասրահով, ունի մարզադահլիճ, ճաշարան, գրադարան:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ջանքերի շնորհիվ Դպրատանը կանոնավոր կերպով ընթանում են պարապմունքներ՝ ապահովված դասախոսական կազմով:

Դպրատան բակում միաժամանակ կառուցվեց փոքր չափերի մի եկեղեցի՝ քանդված Սուրբ Աստվածածին եկեղեցու փոխարեն: Եկեղեցու նախագծի հեղինակն էր Բաղդիկ Արզումանյանը:

Այն հատակագծում վեց պայտաձեւ խորաններով, արեւելք-արեւմուտք առանցքով, արեւմուտքում զույգ սյուներով շրջափակված կամարակապ մուտքով կառույց է՝ տեղադրված ոչ շատ բարձր հարթակի վրա:

Արտաքուստ այն տասներկու նիստերով ձեւավորված եռահարկ մի կառույց է՝ պսակված ռոտոնդայով: Եկեղեցու ծավալատարածական լուծումները հիշեցնում են Անի քաղաքի Հովվի եկեղեցին:

Այսպիսով, առաջին անգամ երկար դադարից հետո սկիզբ դրվեց նոր հոգեւոր կրթական համալիրի՝ Սեւանի Վազգենյան դպրանոցին: Բակում տեղադրվեց Վազգեն Ա Կաթողիկոսի բրոնզաձույլ արձանը: Համալիրը ունի իր տնտեսական բակը, ուր տեղադրված է կաթսայատունը, էլեկտրական ենթակայանը:

Ձեռք բերված նվաճումներն արդյունք են Վեհափառ Հայրապետի ունեցած ամենօրյա հոգածության ու լայն օժանդակության. ոչ մի միջոց չի խնայվում դպրատունը իր կոչման բարձրության վրա պահելու համար: